*Աղյուսակ 32* ***ՈՒԹՀՎ վերլուծության /2022-2023 ուստարի/***

| *Ուժեղ կողմեր* | *Թույլ կողմեր* |
|---|---|
| *1. Աշխատակազմ՝ տարանջատելով վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը*<br><br>• Վարչական անձնակազմը կազմված է երիտասարդ, գիտակ և իրենց գործին տիրապետող մասնագետներից: Նրանք աշխատանքի ընթացքում առաջնորդվում են պետական ակտերով և որոշումներով կայացված նորմերով: Մասնակցել են մասնագիտական տարբեր վերապատրաստումների: Դպրոցում առկա է թիմային աշխատանք, ինչի արդյունքում զգալի բարձրացել է աշակերտների ուսման մակարդակը:<br><br>• Ուսումնաօժանդակ անձնակազմը արհեստավարժ է:<br><br>• Ուսւցչական կազմը տարաբնույթ է, բոլոր ատեստավորման ենթակա ուսուցիչները ստացել են <<Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին>> որակավորումը, 6 ուսուցիչ ունեն առաջին տարակարգ, մեկ ուսուցիչ երկրորդ տարակարգ, մեկ ուսուցիչ երրորդ տարակարգ: Մեկ ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորմանը և ունի բավականին բարձր ցուցանիշ 33-ը | *1. Աշխատակազմ՝ տարանջատելով վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը*<br><br>Ուսուցչական կազմի մի մասը դեռ կարիք ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստման, ինչպես նաև անհրաժեշտ է աշխատանք տանել տարակարգ ունեցող ուսուցիչների և կամավոր ատեստավորմանը մասնակցող ուսուցիչների քանակը ավելացնելու ուղղությամբ: |

| | |
|---|---|
| ստացել են ներառական կրթություն իրականացնելու իրավունք, 3 ուսուցիչ ԿՏԱԿ-ի կողմից երաշխավորվել են  որպես հեռավար ուսուցում իրականացնող մասնագետներ:<br><br>*2.Սովորողներ*<br><br>• Հետաքրքրասեր են, ակտիվ համագործակցում են տարբեր կրթամշակութային ծրագրեր իրականացնող ՀԿ-ների հետ:<br><br>• Աշակերտական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում  ներդպրոցական և արտադպրոցական աշխատանքներում. հանդես է գալիս և որպես կազմակերպվող միջոցառումների աջակից և որպես նախաձեռնող: Իրականացնում են նախագծային աշխատանքներ տարբեր ուսումնական կառույցների հետ համատեղ:<br><br>• Դպրոցի ավանդական միջոցառումների ցանկը շատ բազմաբովանդակ է և ընդգրկում է սովորողների նախասիրությունների ամբողջականությունը՝ սպորտային, մշակութային և ուսւումնական :<br><br>*3. Ծնողներ, համայնք. կառավարման խորհուրդ, այլ մարմիններ:* | *2.Սովորողներ*<br><br>• Առարկայական օլիմպիադաների մասնակցությունը:<br><br>• Ինքնակրթությամբ զբաղվելու կարևորությունը:<br><br>*3. Ծնողներ, համայնք, կառավարման խորհուրդ, այլ մարմիններ:*<br><br>• *Կրթական ցենզը նվազ է:* |

| | |
|---|---|
| • Ծնողները շատ պատրաստակամ են և աջակցում են դպրոցին վերաբերող ցանկացած հարցին:<br>• Համայնքի խնդիրներում ներառված են նաև դպրոցի առօրյա խնդիրները:<br>• Դպրոցի բոլոր խարհրդակցական մարմինները ներգրավված են դպրոցական առօրյայում, աչալուրջ են և իրենց հնարավորությունների սահմաններում աջակցում են դպրոցի  կարիքներին:<br>*4.Ռեսուրսներ*<br>• Մարդկային գործոն<br>• Ուսուցչական կազմ<br>*5. Նոր նախաձեռնություններ*<br>• Խորացնել համագործակցությունը ԱԻՆ-ի հետ<br>• Խորացնել համագործակցությունը Հույսի կամուրջ ՀԿ-ի հետ<br>• Դպրոցում ձնավորել պարի, սպորտի և երաժշտական խմբակներ<br>• Ստեղծել հրաձգարան<br>• Ձևավորել <<Ճանապարհային երթևեկության կանոններ>>-ի հրապարակ | *4.Ռեսուրսներ*<br>• Շենքի սեյսմիկ անկայունությունը<br>• Շենքային պայմաններ, կահավորում<br>• Ուսումնական տեխնիկայի սակավաթիվ լինելը<br>• Լաբորատորիաների հագեցվածությունը<br>*5. Նոր նախաձեռնություններ*<br>*Թաթերական խմբակ*<br>*6. Հաղորդակցություն, համագործակցություն* |

| | |
|---|---|
| • Ստեղծել բացօթյա մարզահրապարակ<br><br>*6. Հաղորդակցություն, համագործակցություն*<br><br>• Դպրոց կենտրոնների միություն<br>• Մենք կարող ենք<br>• Կենտրոն համայնք<br>• Թափոն եմ<br>• ԱԻՆ<br>• ՀՄԿ<br>• ՏՄԱԿ<br>• ԿՋՆԱԿ<br>• Խ. Աբովյանի անվան  պետական Մանկավարժական համալսարան<br>• Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ  ինստիտուտ<br>• Կենդանիների խնամքի կենտրոն<br>• Թատրոններ<br>• Մշակութային կենտրոններ<br>• ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ<br>• Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն<br>• Առաքելություն արևելք<br><br>*7. Բյուտջե, ֆինանսներ* | *7. Բյուջե, ֆինանսներ*<br><br>• Բյուջեի 80%-ից ավելին ուղղվում է աշխատավարձին, մնացած մասը ծախսվում է կոմունալ վճարումների, գրենական և գրասենյակային  պիտույքների, մաքրող միջոցների և ընթացիկ վերանորոգումների վրա |

| | |
|---|---|
| • Առկա չէ ֆինանսական տնտեսում: Դրամական միջոցների անբավարարության պատճառով: | |
| *Հնարավորություններ*<br><br>1.Զարգացնել ՏՀՏ-ները համայքում:<br><br>2.Ինտերակտիվ մեթոդների կիրառման ընդլայնում:<br><br>3.Համայնքի համար հանդիսանում է մշակույթի և տեղեկատվության կենտրոն:<br><br>4.Լեզուների խորացված ուսուցում;<br><br>5.Կառավարման նոր համակարգերի փորձարկումներ: | *Վտանգներ*<br><br>1.Շենքային պայմաններ<br><br>• Շենքում առկա են սեյսմիկ լուրջ խնդիրներ:<br><br>• Ջրամատակարարումը և ջրահեռացումը գտնվում է անմխիթար վիճակում:<br><br>• Հոսանքագծերը, ապահովիչները և կարգավորիչները ԽՍՀՄ շրջանից են: |